ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 5789-Ա « 25 » նոյեմբերի 2026թ.

ԷՐԵԲՈՒՆՈՒ ՓՈՂՈՑԻ Հ.15 ՇԵՆՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 119.9ՔՄ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՆԿՈՒՂԱՅԻՆ ՏԱՐԱԾՔԻ ՀԱՄԱՐ ԿՆՔՎԱԾ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ, ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վարչական ակտի ընդունման համար հիմք է հանդիսացել «Հակոբ Շահինյանի անվան բռնցքամարտի ակումբ» ՍՊ ընկերության տնօրեն Սարիկ Շահինյանի դիմումը՝ Էրեբունու փողոցի հ.15 շենքում գտնվող 119.9քմ մակերեսով նկուղային տարածքի (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.15122023-01-0357 վկայական) համար կնքված վարձակալության պայմանագրի գործողության ժամկետը երկարաձգելու մասին:

Էրեբունու փողոցի հ.15 հասցեում գտնվող շենքը՝ սեփականության իրավունքով պատկանում է Երևան համայնքին /անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման 03.04.2008թ. հ.2599422 վկայական/:

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 37-րդ հոդվածով, քաղաքացիական օրենսգրքի 466-րդ, 468-րդ հոդվածներով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 3-րդ, 53-րդ, 59-րդ և 60-րդ հոդվածներով, Երևան քաղաքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 23-ի N 463-Ն որոշման հավելվածով, հաշվի առնելով 2023 թվականի դեկտեմբերի 12-ի ոչ բնակելի տարածքի վարձակալության հ.10941 պայմանագիրը, «Ֆուլ Քոնսալթինգ Գրուպ» ՍՊ ընկերության կողմից 2026 թվականի հոկտեմբերի 21-ին ներկայացված անշարժ գույքի վարձակալության արժեքի գնահատման հ.FCG1026-0034 հաշվետվությունը.

1.Լիազորել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետին, Երևանի քաղաքապետի անունից, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով «Հակոբ Շահինյանի անվան բռնցքամարտի ակումբ» ՍՊ ընկերության հետ կնքել համաձայնագիր՝ Էրեբունու փողոցի հ.15 շենքում գտնվող 119.9քմ մակերեսով նկուղային տարածքի համար 2023 թվականի դեկտեմբերի 12-ին կնքված ոչ բնակելի տարածքի վարձակալության հ.10941 պայմանագրում փոփոխություն և լրացում կատարելու մասին, ներառելով հետևյալ փոփոխությունը և լրացումը.

1) պայմանագրի 3-րդ կետի 3.1 ենթակետը լրացնել նոր պարբերությամբ, հետևյալ բովանդակությամբ.

«Կողմերի միջև կնքված համաձայնագրի հիման վրա պայմանագրի գործողության ժամկետը երկարաձգվել է մինչև 2029 թվականի դեկտեմբերի 20-ը».

2) պայմանագրի 4-րդ կետի 4.1 ենթակետում՝ «165.900» բառերը փոխարինել «241,000» բառերով:

3) համաձայնագրով սահմանված փոփոխությունը կիրառվում է կողմերի միջև 2026 թվականի դեկտեմբերի 16-ից ծագած հարաբերությունների նկատմամբ:

2.Ընդունել ի գիտություն, որ.

1) սույն որոշման 1-ին կետով նշված համաձայնագիրը ենթակա է նոտարական վավերացման, իսկ դրանից ծագող իրավունքը՝ պետական գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի համապատասխան ստորաբաժանումում.

2) պետական գրանցման, միասնական տեղեկանքի և նոտարական վավերացման հետ կապված ծախսերը կատարվում են «Հակոբ Շահինյանի անվան բռնցքամարտի ակումբ» ՍՊ ընկերության կողմից:

3.Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին կամ դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

4.Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետի վրա:

5.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ղեկավարը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ